

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

քիֆլիսի առևտրական գազեր:

Հրատարակում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսոյ զինք Մարտից մինչև Յունիս-տը քաղաքում 2 ման 50 կոպ, դուրսը 3 ման թ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ
(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գազեթին ստորագրվել կարելի է խմբագրողի մօտ:
Գազեթում հրատարակելու կրնդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է խմանալ խմբագրատանը:

ԲՆԿԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ:

Ապրիլի 6 և 11 Պետերբուրգից ստացած դեպե-շաները: Ծառայողների վտխոսութիւնները: Տոր-գերը: Թիֆլիսի Ներսիսեան ուսումնարանը: Պ. Բոն-չեակու խղերայի վրայ կարգադրած դատերը: Կով-կասի արիւնիւնայի մասին: Մանր տեղեկութիւններ: Առևտրական տեղեկութիւնները:

ԱՊՐԻԼԻ 6 ԻՆ ՍՏԱՅԱԾ ԴԵՊԵՇԱՆ.

Պետերբուրգից:

Ապրիլի 5-ին իսակիեվսկի մայր եկե-ղեցումը և ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ հրաշալի կերպով ապատկելու տեղումը, Լեանի Սա-դի դռան մօտ կէսօրից յետոյ սահաթի 1-ին մօլեբին կատարվեցաւ: Թագաւորը ընդունեց ինչպէս ազնուականներին, նմա-նապէս և քաղաքացւոց երեսփոխների շնորհակալութիւնը: Թէատրներումը, կը-լուբներումը և քուչերումը—մէկ խօսքով ամեն տեղ երևում էր Թագաւորի թանկա-զին կեանքի ազատութիւն ուրախութիւնը:

Չարագործի ով լինելու վրայ դեռ հաստատ բան չկայ: Առաջին հարցնե-լումը նա ասաց, թէ իր անունը Ալեք-սէյ Պետրով է, 24 տարեկան է, Ռուսաս-տանի հարաւային գաւառների մէկի գիւ-ղացի է, բայց չափաց թէ որ գաւառի-նը: Հինգ տարի առաջ Գիմնազիայումը կուրան աւարտել է և էն ժամանակից ըս-կաւ՝ ոչ մէկ որոշ պարապմունք է ունե-ցել և ոչ էլ բնակվելու տեղ: Կարելի է հարծել, որ սրա ասածները բոլորովին հա-ւատալու չլինին:

ԱՊՐԻԼԻ 11-ԻՆ ՍՏԱՅԱԾ ԴԵՊԵՇԱՆ

Պետերբուրգից:

Ճանդարմների Շէֆ և Նորին Մե-ծոՒԹԻՒՆ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ սեփհա-կան կանցելարիայի 3 բաժանման (օտդե-լների) գլխաւոր իշխան Դոլգորուկովը արձակվեցաւ էս պաշտօններից և նրա տեղ նշանակվեցաւ Բալտիկ ծովի մօտ է-լած գաւառների Գեներալ—Գաւառապետ Կոմ Եւսովյովը:

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ վրայ արած չա-րագործութենի պատճառով առանձին կո-միսեայ սարգվեցաւ քննութիւն անելու էս գործի մասին և էս չարութենի մաս-նակիցներին գտնելու: Էդ կոմիսիայի Նա-խագահ նշանակվեցաւ Միխայել Նիկո-լայեվիչ Կոմ Մուրաւևովը, որի նշանակ-վելը շատ լաւ ազդեցութիւն ունեցաւ Պետերբուրգեցեան վրայ, Չարագործի մա-սին դեռ էլի հաստատ բան չկայ:

ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Կովկասի Կազեօննի Պալատումը անպաշ-տօն ծառայող Նազովունի Սովետնիկ ՅՈՎ-ՀԱՆՆԵՍԵԱՆՅԱՆԸ նշանակվեցաւ Կովկասի Մե-ծեմոյ Պալատումը նմանապէս անպաշտօն Փետրվարի 22-ին:

Թիֆլիսի կլասիկական գիմնազիայի Թուր-քերէն լեզուի վարժապետ, Նադվորնի Սո-վետնիկ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆՅԱՆԸ նշանակվեցաւ Պանսիօնի վերակացու Մարտի 1-ին:

Մի և նոյն գիմնազիայի վերակացու ԲԱՐ-ԽՈՒԴԱՐԵԱՆՅԱՆԸ նշանակվեցաւ Գուշեթի ու-

սումնարանի վերատեսուչ և վարժապետ Փե-տրվարի 24-ին:

ՏՈՐԳԵՐ:

Կովկասի Ինտենդանտի կառավարութենու-մը Մայիսի 2-ին նշանակված է Հիւսիսա-ա-րեւելեան բանկի մագաղինը 22,000 հատ ճի-լոք հասցնելու տորգը:

Մի և նոյն տեղը Մայիսի 6-ին նշանակված է Աղբուլաղի պրավիանտի մագաղինի մէջ զըն-ված ցորենը ալալու և էլի էն մագաղինը հասցնելու տորգը:

Մի և նոյն տեղը Մայիսի 26-ին նշանակված է Պետրովսկի մագաղինից Դիլլազարի մա-գաղինը 13,000 չեթվերտ ալալու և 1000 չեթվերտ կրուպա հասցնելու տորգը:

Կովկասի Արտիլերիի Կառավարութենումը Մայիսի 17-ին նշանակված է Թիֆլիսի երկա-թէ ամաններ շինելու գործարանի համար 2148 փութ թերթաւոր երկաթ հասցնելու տորգը:

Թիֆլիսի գաւառական կառավարութենու-մը Մայիսի 24-ին նշանակված է Թիֆլիսի քա-ղաքացի Գէորգ, Միքայել և Սարգիս Փրիդո-նեանցների 1,100 մ. զին զրաժ տան ծա-խելու տորգը:

Մի և նոյն օրը նշանակված է Թիֆլիսի քա-ղաքացի Մեհտի բէգ Աղա Հուսէին օղու 18,254 մ. զին զրաժ երկու տան և փռնի ծախելու տորգը:

Մայիսի 25-ին նշանակված է Պողոպորուշկի Պլատօն Գուրգիբեգեանցի 4000 մ. զին զը-րաժ տան ծախելու տորգը:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ասորիի 16-1866.

Շատ անգամ պատճառ ենք ունեցել խօսել մեր Ներսէս Կաթողիկոսի բարի արարմունքների վրայ և էս անգամն էլ մեր խօսքն է Թիֆլիսի Ներսիսեան ուսումնարանի վրայ: Էս անմոռանալի Կաթողիկոսը լաւ հասկանում էր, որ մեր ազգի հիմնկայ իր դրութեամբ ամենից աւելի օգտակար և հարկաւոր բանը եկեղեցականների կրթելն է և լաւ ու արժանաւոր եկեղեցու պաշտօնեաներ պատրաստելը: Եկեղեցական լաւ պաշտօնեաները, մեծ ապկեցութիւն ունենալով ժողովրդի վրայ կարող են շատ օգուտներ տալ բոլորին էլ, մանաւանդ էն ժամանակը երբ որ կ'ունենան էն տեղեկութիւնները, որ հարկաւոր են զանազան կարգի մարդկանց: Որովհետեւ աւելի մեր հասարակ ժողովրդի վարժապետներ պէտք է լինին եկեղեցու պաշտօնեաները եղբոր համար հարկաւոր է, որ նրանք բացի աստուածաբանութիւնը և եկեղեցական պատմութիւնը կեանքին հարկաւոր բաների վրայ էլ ճիշդ տեղեկութիւններ ունենան:

Մեզ էս խօսքերն ասացնելու պատճառն էր Մեղու Հայաստանի 1865 թւի № 48 և 49 № № և էս տարւոյ 1 և 2 № № տպւած Թիֆլիսի Ներսիսեան ուսումնարանի կանոնադրութիւնը: Էս էն կանոնադրութիւնն է, որն որ 1861 թւին ծնվեցաւ մեր ժողովրդի ընտիրների խօսակցութիւններից: Մնվեցաւ և գործ դրվեցաւ էլ: Շատ զարմանալի բան է ի հարկէ, թէ ինչպէս էլաւ, որ 1861 թւին հաստատված բանը արդվեցաւ միայն 1865 թւի վերջին, բայց մենք էդ խնդիրը միւս կողմ դնելով ուշք դարձնենք կանոնադրութիւնին:

1861 թւի Յունիսի 9-ին մեր վերջին Կաթողիկոս Մատթէոսը կոնդակով հաստատել է էդ կանոնադրութիւնը: Էդ ուսումնարանը պէտք է լինի մեր Կաթողիկոսի և Եջմիածնի Սինոդի ձեռի տակը: Բայց Թիֆլիսումը 12 հոգաբարձուներ են ըն-

տրվում որոնք որ վիճակաւոր առաջնորդին նախագահը ունենալով կառավարում են ուսումնարանը: Էս հոգաբարձուները ընտրվում են 4 տարին մէկ անգամ անուշիկ ուսումնարանը կառավարելու համար: Հոգաբարձուներից մէկը նշանակված է ուսումնարանի տեսուչ ու ճիշդ և առանց որոշ ժամանակի: Էդ ուսումնարանումը պահվում են թէ ուսումնարանի ծախսով և թէ մասնաւոր բարերարների ծախսով որդեգիրներ: Սովորեցնում են էդտեղ էս առարկաները՝ Քրիստոնէական վարդապետութիւն, եկեղեցական պատմութիւն, Հայոց լեզու և գրականութիւն, Ռուսաց լեզու և գրականութիւն, Գաղղիացւոց լեզու և գրականութիւն, Լատինացւոց լեզու, մատեմատիկա, աղբային պատմութիւն, Հայաստանի և Ռուսաստանի աշխարհագրութիւն, ընդհանուր աշխարհագրութիւն, բնագիտութիւն, բնական պատմութիւն, առանձին բժշկականութիւն, վայելչագրութիւն, նկարչութիւն և եկեղեցական երգեցողութիւն:

Էս առարկաները պէտք է սովորեն աշակերտները էդ ուսումնարանումը գրտնված 6 դաստանը և մէկ էլ պատրաստական դաստան մէջը: Լաւ աւարտող աշակերտները, որոնք կցանկանան բարձր ուսումնարաններումը կատարելագործվել, պէտք է ուղարկվին ուսումնարանի ծախսով: Աւարտող աշակերտները եկեղեցու պաշտօնեայ դառնալ ցանկացողները և էդ բանի ընդունակութիւն ունեցողները կդառնան քահանայ: Քաղաքումը գտնվում են Ներսիսեան ուսումնարանի հոգաբարձուների ձեռի տակը:

Բայց մենք կարծում ենք, որ էդ ուսումնարանը, ինչ տեղ որ գլխաւորապէս սովորում են մեր Հայաստանի կողմ ընցն եկած արեքը, պէտք է աւելի մօտիկանայ գործով իր նշանակած նպատակին: Էդ ուսումնարանը պէտք է պատրաստէ մեզ համար գլխաւորապէս արժանաւոր քահանաներ և ծխական ուսումնարանների, մանր քաղաքների և գիւղերի հայոց ուսումնարանների վարժապետներ: Ամենքը

պարզ գիտեն թէ մեր քահանաների և թէ մեր մանր ուսումնարանների վարժապետների ցաւալի վիճակը. կոչվում են միայն քահանայ և վարժապետ, բայց գործով շատ հեռու են իրանց նշանակութենից, քահանայ տալով էլ մենք հասկանում ենք ժողովրդի վարժապետ նրանց աչքը բաց անող, թէ նրանց հոգւոր և թէ մարմնաւոր պիտոյքների համար: Ուրեմն երկուսն էլ, քահանան և վարժապետը մեր ազգային ժողովրդի աչք բաց անողներն են, նրանց բան հասկացողներն են և ամեն լաւ բան արաջացողները: Ասացէք ինձ, ասել է մէկ գիտնական, թէ քանի ուսումնարան կայ ձեր երկրումը և քանի վարժապետ, ես ձեզ կասեմ, ասում է, թէ ինչ վիճակի մէջն է ձեր երկրի ժողովուրդը: Էս խօսքը հիմն ամենի համար էլ պարզ է:

Էտեղը համար էլ մենք յայտնում ենք մեր համոզմունքը, որ հիմն մեր Ներսիսեան ուսումնարանը պէտք է կատարէ էս պարտականութիւնները, պատրաստէ արժանաւոր քահանաներ և օրինաւոր վարժապետներ:

Վերելը յիշված գիտութիւնները, որ դաս են տվում Ներսիսեան ուսումնարանումը, մէկ կողմից շատ ընդարձակ են և միւս կողմից բաւական թերի: Աւելորդ են Գաղղիացւոց լեզուն ու գրականութիւնը և Լատինացւոց լեզուն: Պակաս է մանկավարժութիւնը (պեդագոգիկան) և տնտեսական գիտութիւնները:

Եթէ կամենում եք էլ աւելի քայլեր արարականները, բայց միայն էնպէս արեք, որ ինչ որ սորվեցնեք աշակերտներին հիմնաւոր և նկատողական կերպով սորվեցնեք: Ենպէս սորվեցրեք, որ աշակերտը ուսումն աւարտելուցն յետոյ, ուսումնարանումը չժողնէ իր բոլոր սովորածն ու աշխարհումը նորից հարկաւորված չլինի սովորելու կեանքին հարկաւոր բաները: Ենպէս արեք, որ նրանցը ամեն առարկայ սորվեցնելիս մեր կեանքին յարմարացնեք, որ ամեն մէկ առարկայ նրան ճիշդ տեղեկութիւններ տայ աշխարհիս վրայ և ամեն մէկ գիտութիւն

Թիւնները պէտք է սովորեն, որ դրանցը միայն կեանքումը պէտք կզան և ոչ թէ անոգուտ լատիներէնը և յունարէնը: Էդպիսի է ապա- զայ կեանքի խորհուրդը: Հիմիկվայ բժշկա- կանութիւնն էլ միայն կեանքը վտանգներէն ազատ պահելու խնդիրներով է պարապում: Պետենկոֆէր հիմիկվայ երեւի բժիշկը բը- ժշկականութիւնի նշանակութեան վրայ խօսե- լիս ասում է թէ, բժշկականութիւնը պէտք է լինի մարդկութեան վարժապետը, դաս- տիարակողը և պահապան հրեշտակը:»

Էդպէս անձ բժշկականութիւնը պարտա- կան է ոչ թէ միայն բժշկել հիւանդացած մար- քուն, այլ առաջուց հողայ էր հիւանդութիւն- ների առաջն առնելու համար: Իբրև ժա- մանակակից բժիշկ և իր պարտականութիւնը ճանաչող Պ. Բոնչուսկին էր պատճառով կար- ղաց խօսիրայի մասին իր դասերը: որովհետև, ինչպէս յայտնի է, էր հիւանդութիւնը հերոս աշնան ժամանակը հառա և մեր երկիրը և թէպէս մենք ուրիշ երկրացիներու պէս շատ փնտսներ չկրեցինք նրանից, բայց էր հիւան- դութիւնը կարելի է էլի դայ դէպի մեղ, է- դուր համար էլ օրով առաջ պէտք է դիտե- տենանք էր ցաւի ինչութիւնը և առաջն առ- նելու միջոցները:

Խօսիրայի ինչ լինելու վրայ խօսելուց ա- ռաջ մենք աւելորդ չենք համարում ասել էստեղ մէկ երկու խօսք կովկասի բժշկական ընկերութեան վրայ, որ հիմնված է Թիֆլի- սումը սրանից երկու տարի առաջ: Ասելը մինչև անգամ աւելորդ է, որ էր ընկերու- թիւնը մեծ օգուտներ կարող է տալ առ հա- սարակ կովկասի և մանաւանդ Թիֆլիսի բը- նակիչներին: Պ. Բոնչուսկին, էն ընկերու- թեան ատենագիրը լինելով, իր դասերի մէջը գանգատվում էր ժողովրդի դէպ ի ընկերու- թիւնը ունեցած սառնութենի վրայ: Բայց թէ կարելի է արդեօք էր բանումը ժողովուրդ- ղը մեղադրել, քանի որ բացի մէկ քանի լուսաւորեալ պարոններից ոչ ոք չէ լսել մինչև անգամ էր ընկերութեան լինելը, բայց ամեն- քը զիտեն, որ բժշկների կարօտութիւն ու- նին աւելի մեր արհեստաւորները և մշակնե- րը, քան թէ հարուստները և լուսաւորու- ածները: Մենք կարծում ենք, որ էր ըն- կերութիւնը էն ժամանակն աւելի պտուղ կարող է տալ, երբ կկարողանայ հայերէն և վրացերէն հրապարակական դասեր կարդա- լով, կամ էս նպատակին յամար ժուրնալ տը- պելով սորվեցնել ժողովրդին գիթիկնայի և մարմնակազմութեան սկզբունքները և էնպէս հասկանալի ձևով, որ մեր հասարակ ժողո- վուրդը հասկանար իր անզգուշութեան, կեղ-

տոտութեան, շռայլութեան և յիմար քէֆի հետևանքները իր կեանքի համար ու պոտ- րաստ լինէր ամեն բոլոր խօսիրայի և ամեն տեսակ դիպչող հիւանդութիւնների տուաջն առնելու ոչ թէ ապտեկաների դեղերով, այլ միայն իրանց մարդավարի կեանք վարելով:

Ա. Ե.

ԿՈՎԿԱՍԻ ՏՐԻԽԻՆԱՅԻ ՄԱՍԻՆ:

Տրիխինա ասած բանը մէկ տեսակ որ- դունք է, որն որ լինում է խոզի մսի փա- փուկ տեղերումը և չեղած, այլ դուրս կանդ- նեցրած և հում խոզի միս ուտելիս մոտում է մարդու մարմնի մէջը: Մարդու կերած տրի- խինան մնում է աղիքների մէջը, բազմա- նում է, ուտում է աղիքները և անց է կե- նում մսի մէջը, մեծանում է և պնդանում է, Մտում մտած տրիխինայի դէմ ոչինչ դեղ չկայ, բայց աղիքներիցը կարելի է քչել նրանց սատակ լուծողական դեղով:

Պետերբուրգումը 1865 թիւն գտել են խո- ղի մսի մէջ տրիխինա, խառավ իւրտումն էլ իբր թէ բժիշկ կովկասիին գտել էր տրիխինա և յայտնել էր էդուր մասին էս տարի ուո- սերէն շիվկասա գաղէթի 5 Ճճմը:

Բայց դրանից յետոյ բժիշկ Մալինինը միև նոյն կովկասի 18 Ճճումը յայտնեց, որ կող- լովակու գտած որդունքը տրիխինա չէ, այլ մէկ ուրիշ տեսակ որդունք է, որն որ շատ նման է տրիխինային: կողովակու գտած որ- դունքը, ասում է Մալինինը, նմանապէս խո- ղի մտումն է լինում: Բայց մարդու կերած ժամանակը տրիխինայի պէս փնտս չէ տալիս, այլ դառնում է էսպիսի մէկ ճիճու, որին մի- ղանում ասում են փորի ճիճու և բուրբուլին անփնտս բան է մարդուս ստամոքսին:

Մենք էլ, Թիֆլիսումը մէկ քանի տեղերումը տրիխինայի վրայ խօսակցութիւն լսելով, հրա- տարակում ենք էս տողերը՝ ժողովրդի հան- դարտացնելու համար:

ՄԱՆՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Սիբիրի Ծմով քաղաքից գրում են, որ հի- մի Ռուսաց տէրութիւնը բոլորովին համոզ- վեցաւ Սիբիրումը մէկ համալսարան չինելու համար: Փողից աւելի ուրիշ ոչինչ արդելք չէ կարող ունենալ էս գործի գլուխ դալը:

Ռուսաստանի վեց համալսարաններումը, որ գտնվում են 1.) Պետերբուրգումը, 2.) Մոս- կով, 3.) Ղազան, 4.) Նարչով, 5.) Օդե- սա 6.) Կիև—497 պրոֆեսորի տեղեր կան, էր 497 պրոֆեսորի տեղերիցը 248 բռնած է, իսկ 249 տեղը պարած է մնացած:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Լիվերպուլ Մարտի 24:

Ծախվեցաւ 3000. հակ բամբակ բայց հարցնողները շատ քիչ են:

Պետերբուրգ Մարտի 29:

Կուրսերը Լոնդոնի վրայ 3 ամիս ժա- մանակով—29 ⁵/₈ պենս:

Պարիժի վրայ . . . 312 սանտիմ:

5⁰/₀ Լատարեյով առաջին փոխառու- թենի տոմսակները . . . 109 ³/₄ ման:

5⁰/₀ Լատարեյով երկրորդ փոխառու- թենի տոմսակները ծախվում են բանկումը —105 ¹/₂ ման:

Ռսկին . . . 6 մ. 57 կ.

Օդեսա Մարտի 31:

Կուրսը Մարսելի վրայ—315 սանտիմ:

Կ Պոլիս Մարտի 26:

Բուրդի ցածր տեսակների առնողներ չկան: Թուշի գարնան սպիտակ բուրդը 9 ¹/₂ պենսից—10 պենս:

Բամբակի հախան 15 ¹/₄ ղուրուշից —15 ¹/₂ ղուրուշ:

Թիֆլիս 1866 Ապրիլի 16:

Բամբակի ծախս չկայ անցեալ շա- բաթից դէսը: Ծախողները փթին 10 մա- նեթ են ուզում, առնողները չեն տա- լիս էր գինը:

Բուրդը . . . —

Եալայի լեղակը 6 ամիս ժամանակով 150 մ:

Ինգլիզու շաքարը 9 մ. 80 կ:

Ռսկին . . . 11 մ:

Արծաթը 72 պրոբի . . . 53

— 84 պրոբի . . . 250 մ:

Ռսկին . . . 6 մ. 71 կ: